Բարեփոխումների հարցի շուրջ (Հայկ Մարկոսյան)

Ես ցանկանում եմ ելույթս սկսել այն մտքից, որ արդարության վերականգնման համատեքստում անհրաժեշտ է տարբերակել լավ ու վատ աշխատող ինստիտուտներին, իսկ ինստիտուտներում լավ ու վատ աշխատող գիտաշխատողներին: Լավ աշխատողներին անհրաժեշտ է խրախուսել, իսկ վատ աշխատողներին հարկավոր է աշխատանքից ազատել, պետք չէ, որ գիտաշխատողը լինի քարշ եկող կամ գլուխ պահող: Գիտաշխատողը պետք է լինի ձգտող և ունենա հաղթական ոգի: Իսկ դրա համար իր անելիքն ունի նաև գիտության կոմիտեն, ով պարտավոր է սահմանել չափորոշիչներ տնօրենների ու բոլոր մասնագիտությունների գիտաշխատողների համար, որպեսզի հնարավոր լինի տարբերակել լավ աշխատողին վատ աշխատողից և լինի արդարություն բառիս ամենալայն իմաստով: Եվ սահմանված չափորոշիչների պայմաններում ես կոչ կանեի և՛ ՀՀ ԳԱԱ-ի, և՛ տնտեսագիտության ինստիտուտի ղեկավարություններին՝ խրախուսելու լավ աշխատող գիտաշխատողներին: Ընդ որում՝ այդ խրախուսանքը կարող է լինի դրամական կամ բարոյական:

Տնտեսագիտության ինստիտուտը ≈ 70 կիրառական առաջարկություններ է ներկայացրել հանրապետության տարբեր ժամանակների կառավարություններին, որոնք հասցեագրվել են և՛ պատասխանատու նախարարներին, և՛ անձամբ վարչապետներին: Սակայն դրանցից մի մասին է ընթացք տրվել: Բայց դա չի նշանակում, թե դրանք կորցրել են իրենց արդիականությունը:

Հետպատերազմյան այս ծանր շրջանում Հայաստանը այս վիճակից հանելը չի կարող լինել մեկ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի մենաշնորհը: Դա մենք պետք է անենք ազգովի, ամեն մեկս մեր հնարավորության սահմաններում, առանց ամբիցիաների, վայրիվերումների ու մեծամտությունների: Մենք՝ բոլորս, հայտնվել ենք մեկ նավի մեջ՝ տգետ թե՛ մտավորական, աղքատ թե՛ հարուստ, արվեստագետ թե՛ արհեստավոր, գյուղացի թե՛ քաղաքացի, զինվոր թե՛ գեներալ և այլն: Եկել է բոլորիս քրտնաջան աշխատելու և գոտիները ձգելու ժամանակը, եթե ցանկանում ենք որպես պետություն տեղ ունենալ արևի տակ:

Աշխատողին պետք է խրախուսել, իսկ չաշխատողին՝ պարսավել, անկախ նախկինում ունեցած ձեռքբերումներից:

Նոր ժամանակներում նոր արդյունքներ ու արժեքներ են հարկավոր: Խորհրդարանական ընտրություններին ռեկորդային թվով քաղաքական ուժերի մասնակցությունը վկայությունն է այն փաստի, որ հայ հասարակայնությունը բազմաշերտ է և, որ ամենավատն էլ այն է, որ այդ շերտերը միմյանց չեն վստահում, որի արդյունքում նրանք չեն միավորվում: Այդ բարդ աշխարհաքաղաքական ու թշնամական հարևան պետությունների շրջապատման պայմաններում, մեզ հարկավոր է այլ առաջավոր պետությունների տնտեսավարման դրական փորձի և այլ ազգերի մտածողության ու հոգեբանության ընդ-

օրինակումը, որի համար ինստիտուտը գիտական նստաշրջան է ծրագրում անցկացնել 2022թ. առաջին կիսամյակում, որը նվիրված կլինի աշխարհի ավելի, քան չորս տասնյակ պետություններում «տնտեսական հրաշքներ» և «տնտեսական նորոգություններ» իրականացրած երկրների տնտեսվարման առաջավոր փորձին և Հայաստանում դրանց գործարկմանը, որոնք կնպաստեն Հայաստանի տնտեսության արագատեմպ զարգացմանը:

Որպես վերջաբան, ասեմ, որ այսպես հավաքվելով ու հավաքատեղիները «Վերնատուն» դարձնելով և հզոր մտքեր գեներացնելով ու գործնականում դրանք կյանքի կոչելով, մենք կունենանք ***Հզոր Հայրենիք և Հզոր Նոր Հայաստան:***